ԳԵՂԵՑԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
GEKHETSIK GRIGORYAN

ԽՈՍՔԱՅԻՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐԻ ՇՏԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԼՈԳՈՊԵԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում, տարեցտարի ավելանում է խոսքի տարբեր խանգարումներ ունեցող երեխաների թիվը: Պայմանավորված տարբեր պատճառներով՝ երեխայի խոսքն ավելի շուտ է ենթարկվում բացասական ազդեցությունների: Դրանք արտահայտվում են խոսքային խանգարման տարբեր դրսևորումներով: Խոսքային խանգարումների կանխարգելման ու ժամանակին իրականացվող շտկման հարցերի հանդեպ հետաքրքրության կտրուկ բարձրացումը պայմանավորված է մարդու կյանքում խոսքի անփոխարինելի նշանակությամբ: Այն նպաստում է մարդու հոգեկան ոլորտի զարգացմանը, ապահովում է ուսուցման և գիտելիքների ձեռք բերման գործընթացը, ազդում անձի ձևավորման և զարգացման վրա [1]: Ուստի, խոսքի յուրացման դժվարությունները ու տարաբնույթ խանգարումները, իրենց հերթին, խոչընդոտում են երեխայի և ուսուցման գործընթացին, և անձի ամբողջական ձևավորմանն ու զարգացմանը: Ժամանակին և բավարար մակարդակով խոսքին չտիրապետող յուրաքանչյուր երեխա ունենում է բազմաթիվ դժվարություններ ամբողջ ուսումնական գործընթացում [3]: Իր հերթին, ցանկացած այդպիսի դժվարություն առաջացնում է անվստահություն, հիասթափություն, ուսուցման նկատմամբ բացասական վերաբերմունքի դրսևորում, ինչն էլ կարող է նպաստել երեխայի մեկուսացմանը և նեգատիվ ռեակցիաների ձևավորմանը [4]: Մեր օրերում արձանագրվում է խոսքային խանգարումների տարածվածության կտրուկ աճ: Վերջինս, իր հերթին, պատճառ է դառնում խոսքային խանգարումների կանխարգելման և շտկման գործընթացների շրջանակների ընդլայնմանը և այդ խնդիրների հանդեպ հետաքրքրության մեծացմանն ու արդիականացմանը: Հարկ է նշել, որ լիարժեք խոսքի ձևավորումն անհրաժեշտ է սկսել վաղ տարիքից: Վաղ տարիքում խոսքային խանգարումներ ունեցող երեխաների խնդրի հայտնաբերումը հնարավորություն կտա ծնողներին, ինչպես նաև մասնագետներին, ժամանակին և

արդյունավետ անցկացնել զարգացնող մանկավարժական աշխատանքներ և հետագայում հասնել դրական արդյունքների, ինչն էլ խթան կհանդիսանա նրանց ազատ և անկաշկանդ ներառմանը ուսումնական գործընթաց[5]:

Խոսքային խանգարումներ ունեցող երեխաների ուսուցման ու դաստիարակության ճիշտ և նպատակաուղղված կազմակերպման, ինչպես նաև, տարիքային առաջատար գործունեության ձևավորման մեջ մեծ դեր ունի շտկողազարգացնող օգնությունը, ինչը, ցավոք սրտի, խոսքային խանգարումների պարագայում հաճախ չի հասնում վերջնանպատակի, այն է՝ լիակատար և վերջնական շտկման: Խոսքային խանգարումներով պայմանավորված բացասական դրսևորումների հայտնաբերումը, ուսումնասիրումը, ախտորոշումը, կանխարգելումն ու շտկումը լոգոպեդիայի կարևորագույն խնդիրներից են, որոնցով էլ հիմնավորվում է խնդրո առարկա թեմայի արդիականությունը, քանի որ ընտանիքի պայմաններում ցուցաբերվող օգնությունն,միշտ չէ, որ կարող է լուծել երեխայի խոսքային և հաղորդակցման խնդիրները, իսկ շտկողական աշխատանքի կազմակերպման հաջողությունը, հաճախ, պահանջում է մեթոդական որոշակի համակարգային ներգործություն: Այս առումով, քննարկվող թեմայի վերաբերյալ, մեր կողմից, անցկացված հետազոտությունը թույլ է տալիս խոսքային խանգարումների ժամանակ իրականացվող շտկողադաստիարակչական աշխատանքների և դրանց առանձնահատկությունների ուսումնասիրումը կառուցել ճանաչողական գործընթացների յուրահատուկ ձևավորման և զարգացման ճանապարհով, որն էլ իր հերթին խոսքային խանգարումների շտկման արդյունավետ միջոց է: Դա պայմանավորված է բարձրագույն բոլոր հոգեկան գործընթացների սերտ կապով և փոխգործունեությամբ, քանի այդ գործընթացներից յուրաքանչյուրի խանգարումը բացասաբար է ազդում մյուս գործընթացների վրա և ընդհանրապես, դրանցից յուրաքանչյուրի շտկումն իր դրական ազդեցությունն է ունենում հոգեկան այլ գործընթացների վերականգնման և շտկման վրա: Խոսքային խանգարումների ժամանակ իրականացվող շտկողադաստիարակչական աշխատանքներն, երբեմն որոշակի բարդություններ են առաջացնում: Բարդություններ պայմանավորված այն հանգամանքով, որ այս խանգարումների արտահայտման ժամանակ բացի առաջնային խոսքային խանգարումից առկա են լինում նաև այլ, երկրորդային ոչ խոսքային խանգարումներ [2]: Տուժած են այս երեխաների բոլոր ճանաչողական գործընթացները հիշողություն, մտածողություն, ուշադրություն, ընկալում, նկատվում են նաև վարքի, հուզականային ոլորտի, մտավոր գործունեության յուրահատուկ խանգարումներ: Կախված առաջնային արատի ծանրության աստիճանից տարբերում են երկրորդային խանգարումների դրսևորման ձևեր, ծանրության աստի-

ճաներ, առանձնահատկություններ: Եվ դրանք նույնպես, ինչպես և առաջնային խոսքային խանգարումները, պահանջում են հատուկ մշակված, նպատակաուղղված շտկողական աշխատանք: Որքան բազմակողմանի են շտկողամանկավարժական աշխատանքները, որքան շատ ոլորտներ են ներառում իրենց մեջ, այնքան արդյունավետ են վերականգնողական աշխատանքները: Այսպես, խոսքային խանգարումների շտկման գործընթացում հատուկ ուշադրություն է դարձվում ճանաչողական գործընթացների ձևավորմանն ու զարգացմանը, որն էլ իր հերթին կարող է հանդիսանալ խոսքային խանգարումների շտկման արդյունավետ միջոց: Երկրորդային խանգարումների շտկման սկզբնական աշխատանքներն ուղղված են երեխաների համակարգային ախտորոշմանը: Այս հետազոտման ընթացքում արտացոլվում են բժշկական, գենետիկական և սոցիալական ռիսկի գործոնները, տեղի է ունենում ֆունկցիոնալ ինդենտիֆիկացիա, ըստ այդմ, որոշվում է հոգեֆիզիկական զարգացման աստիճանը[8]: Զարգացման խանգարման առանձնահատուկ կառուցվածքի համակարգային հետազոտումը ենթադրում է առաջնային արատի արտահայտման աստիճանի, ախտաբանական համախտանիշների բնույթի, զուգակցված հիվանդությունների, երեխայի սոմատիկ վիճակի, նրա զարգացման վրա սոցիալական գործոնների ազդեցության բնույթի որոշում: Մեր կողմից իրականացված հետազոտության նպատակը խոսքային խանգարումների ժամանակ իրականացվող շտկողադաստիարակչական աշխատանքների և դրանց առանձնահատկությունների ուսումնասիրումն է, որի համար էլ լոգոպեդական շտկողական գործընթացում կարևորվել են հետևյալ խնդիրները.

1.Խոսքային խանգարումների պաթոգենեզում առկա երկրորդային խանգարումների ուսումնասիրում:

2.Ճանաչողական գործընթացների ուսումնասիրում խոսքային խանգարումների շտկման գործընթացում:

3.Ճանաչողական գործընթացների ձևավորմանն ու զարգացմանն ուղղված աշխատանքների ուսումնասիրում:

Փորձը ցույց է տալիս, որ խոսքային խանգարումների շտկման գործընթացը պետք է կազմակերպված լինի ըստ համապատասխան մեթոդական համակարգի, ինչը կբերի ճանաչողական ոլորտի ձևավորմանն ու զարգացմանն ուղղված աշխատանքների արդյունավետության բարձրացմանը: Բարդ խոսքային խանգարումների պաթոգենեզում առկա են նաև երկրորդային ոչ խոսքային խանգարումներ, որոնց կանխարգելմանը և շտկմանը նպաստում է երեխայի ընտանիքի ակտիվ մասնակցությունը: Շտկման նման գործընթացում մշակված հատուկ վարժությունները նպաստում են ճանաչողական գործընթաց-

ների ձևավորմանն ու զարգացմանը: Ելնելով արատի համակարգային կառուցվածքի գաղափարից, ըստ Լ.Ս. Վիգոտսկու, երեխայի անոմալ զարգացման մեջ առանձնացվում է խանգարումների երկու խումբ՝ առաջնային, որոնք ուղղակիորեն բխում են հիվանդության կենսաբանական բնույթից /օրինակ՝ լսողական և տեսողական խանգարումներ՝ զգայական օրգանների վնասման ժամանակ և այլն/, և երկրորդային, որոնք անուղղակիորեն առաջ են գալիս ոչ նորմալ զարգացման հետևանքով [7]: Այս բաժանումը կարևոր է խանգարված զարգացման ուսումնասիրման համար: Առաջնային խանգարումը կարող է թերզարգացման կամ վնասվածքի բնույթ կրել: Այն դեպքում, երբ հիվանդագին պրոցեսի հիմքն անհայտ է, առանձնացնում են ոչ թե առաջնային, այլ հիմնական և երկրորդային խանգարումներ, որոնք, ըստ Լ.Ս.Վիգոտսկու, հոգեբանական ուսումնասիրման և անոմալ զարգացման շտկման ժամանակ կարևոր օբեկտ[6]: Դրա կառուցվածքում ներառված են մի շարք բաղադրիչներ, որոնք արտացոլում են ինչպես հիվանդագին պրոցեսի առանձնահատկությունները, այնպես էլ այն օրինաչափությունները, որոնցով որոշվում է դիզօնտոգենեզը մանկական տարիքում: Երկրորդային խանգարումների առաջացման պատճառները տարբեր են. երկրորդային ձևով տուժում են այն ֆունկցիաները, որոնք անմիջականորեն կապված են վնասվածքի հետ, այսպես կոչված սպեցիֆիկ թերզարգացումները: Երկրորդային խանգարումները բնորոշ են նաև այն ֆունկցիաներին, որոնք բացասական գործոնների ազդեցության ժամանակ գտնվում են այսպես կոչված կրիտիկական շրջանում: Արդյունքում, որքան բարդ է հոգեկան պրոցեսը, որքան շատ է միջնորդավորված միջկենտրոնական փոխազդեցություններով, այնքան շատ գործոններ կարող են հանգեցնել երկրորդային խանգարումների, որոնց առաջացման գլխավոր գործոնը սոցիալական դեպրիվացիայի գործոնն է [6]: Խանգարումը այս կամ այն չափով խոչընդոտում է շփմանը, արգելակում է գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը: Բարդ խոսքային խանգարումներն առաջացնում են արտահայտված երկրորդային միկրոսոցիալական և մանկավարժական բարդույթներ, հուզական և անձնային ոլորտներում մի շարք խանգարումներ, ինքնագնահատականի իջեցում: Տուժում են երեխաների բարձրագույն հոգեկան գործընթացները, մտավոր գործունեությունը, վարքը: Վերոհիշյալ բոլոր խանգարումները պահանջում են հատուկ նպատակաուղղված շտկողական աշխատանք: Կազմակերպված լոգոպեդական գործընթացում ճանաչողական գործընթացների խանգարումները կարելի է կարգավորել բազմաթիվ մեթոդներով և եղանակներով: Շտկողական աշխատանքները կարող են ընթանալ երկու ուղղություններով՝

1.Հատուկ վարժությունների կիրառում, որոնք ակտիվացնում են ճանաչողական գործընթացների հիմնական հատկությունները՝ վերլուծություն և համադրություն, համեմատում, մտապահում, ծավալ, բաշխում, կենտրոնացում և այլն:

2.Վարժությունների կիրառում, որոնք ուղղված են ճանաչողական գործընթացների առավել կայուն որակների համադրություններին /մտածողության, հիշողության, ուշադրության անհատական՝ տիպոլոգիական առանձնահատկություններ, որոնք նաև պայմանավորված են նյարդային համակարգի տիպով և որոնց հիման վրա ձևավորվում են հոգեկան գործընթացները որպես անձի հատկություն/:

Հոգեկան գործընթացների ուսումնասիրմանն ուղղված հետազոտության արդյունքները ներկայումս թույլ են տալիս իրականացնել այդ գործընթացների զարգացման ուղղված արդյունավետ աշխատանքներ՝ օգտագործելով ինֆորմացիայի մշակման և պահպանման ոչ ավանդական միջոցներ: Այս ամենով պայմանավորված՝ նմանատիպ աշխատանքներ իրականացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել այդ գործընթացների ոչ միայն ֆիզիոլոգիական, այլ նաև հոգեբանական առանձնահատկությունները: Հոգեկան գործընթացների զարգացմանն ուղղված վարժությունների հիմքում ընկած են որոշակի դիրքորոշումներ, որոնք օգտագործվում են խոսքային խանգարումների և դրանց հետևանքով առաջացած երկրորդային խանգարումների շտկման գործընթացում: Բարդ խոսքային խանգարումների շտկման գործընթացում իրականացվող հետազոտության արդյունքները թույլ են տալիս կատարել որոշակի հետևություններ.

1.Բարդ խոսքային խանգարումների ժամանակ հանդիպում են բազմաթիվ երկրորդային խանգարումներ ճանաչողական գործընթացների, վարքի, ինտելեկտի, հուզակամային ոլորտի:

2.Լոգոպեդական շտկողական աշխատանքները կազմակերպելիս կարևոր է ոչ միայն առաջնային խանգարման բնույթի, կառուցվածքի, առանձնահատկությունների հաշվառումը, այլ նաև դրանով պայմանավորված երկրորդային խանգարումների առկայությունը:

3.Քանի որ խոսքը որպես բարձրագույն հոգեկան ֆունկցիա, սերտ կապի և փոխգործունեության մեջ է գտնվում մյուս հոգեկան գործընթացների հետ, ուստի դրա շտկման համար արդյունավետ միջոց է համարվում ճանաչողական գործընթացների ձևավորումն ու զարգացումը:

4.Շտկողական աշխատանքներում կարևոր է ծնողների և ընտանիքի մյուս անդամների ակտիվ մասնակցությունը:

5.Շտկողական աշխատանքներում կարևորվում է դրական սոցիալական միջավայրի ստեղծումը, որտեղ մեծանում է երեխան:

6.Աշխատանքները պետք է կազմակերպել հաշվի առնելով երեխայի տարիքային և անհատական առանձնահատկությունները:

7.Ողջ աշխատանքի կազմակերպման ընթացքում մեծ նշանակություն է տրվում ընդհանուր դիդակտիկ սկզբունքներին ուսուցման դաստիարակչական ազդեցությանը, գիտականությանը, համակարգվածությանը, հետևողականությանը, մատչելիությանը, ակտիվությանը, անհատական մոտեցմանը:

Այսպիսով, մեր կողմից իրականացված բազմածավալ հետազոտությունները ապացուցում են, որ խոսքային խանգարումների հետևանքով առաջացած երկրորդային խանգարումների ճիշտ և ժամանակին ախտորոշման, հետազոտման, կազմակերպված լոգոպեդական աշխատանքների իրականացման շնորհիվ հնարավոր է խոսքային խանգարումների շտկումը երկրորդային խանգարումների շտկման ճանապարհով հասցնել դրական արդյունքի:

Գրականություն

1. Богданова Т. Г., Корнилова Т. В. „Диагностика позновательной сферы ребенка''. М. 2007.
2. Бурлачук Л. Ф. „Психодиагностика личности''. К. 2009
3. Волкова Г. А. „Методика обследования речи у детей''. СПБ – 2011.
4. Колягин В. А., Авчиникова Т. С. „Психология лиц с нарушениями речи''. СПБ – 2007
5. Фотекова Т., Ахутина Т. „Неоропсихологическая диагностика речевой паталогии у детей'' – Школьный психолог 2001.
6. Выгодский Л. С. „Мышление и речь'' М. 1956.
7. Галперин П. Я. „Психология мышления и учение о поэтапном формировании умственных действий". М. 1966.
8. Леонтьев А. Н. „Проблемы развития психики''.1957.

THE PECULIARITIES OF SPEECH THERAPEUTIC WORK WITH COMPLEX SPEECH DISORDER

From the perspective of adequate relieve and socialization of people with speech disorders it is important to solve the issues of differential diagnostics and psychological-pedagogical correction, which will allow to distinguish the primary speech underdevelopment among other states which have similar external manifestations. That is why it is important to be able not only to reveal the speech defect, but also to define the peculiarities of mental development of the person with speech disorders.